ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔ

✉2105 գ. ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ 1 փող. 34
☎-098787225 - blagodarnoye.lori@mta.gov.am

Թիվ 0/21-17

13.02.2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ ՊՐ-Ն
Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

ՁԵԶ ԵՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ 08-Ը ՓԵՏՐՎԱՐԻ ԹԻՎ 04-Ա և ԹԻՎ 05-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ:

Առդիր՝ 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

գ.Բլագոդարնոյե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔ

✉ 2105 գ. ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ 1-ի փող. 34
☎- 098787225 blagodarnoye.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» փետրվարի 2017 թվականի N 04-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Բլագոդարնոյե համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 13-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Բլագոդարնոյե համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Գևորգ Ներսեսյան			
Հրանտ Գևորգյան			
Էրիկ Բալասանյան			
Էլինա Բալասանյան			
Լուսինե Գևորգյան			

Համայնքի ղեկավար՝ _____ / Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ /

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Բլագոդարնոյե համայնքի ավագանու
2017 թվականի 08-ը փետրվարի N 04-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Սարգսյան Արման Ռուբիկի - 25 000 (քսանհինգ հազար) դրամ.

2) Սուքիասյան էրիկ Վոլոդյայի - 25 000 (քսանհինգ հազար) դրամ.

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 50 000 (հիսուն հազար) դրամ:

Բլագոդարնոյեի
համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ Օ.ՀՈՒՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔ

✉ գ. ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ☎-098787225
- blagodarnoye.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» փետրվարի 2017 թվականի N 05-Ն

ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով `

Բլագոդարնոյե համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Բլագոդարնոյե համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Բլագոդարնոյե համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Գևորգ Ներսեսյան			
Հրանտ Գևորգյան			
Էրիկ Բալասանյան			
Էլինա Բալասանյան			
Լուսինե Գևորգյան			

Համայնքի ղեկավար՝ _____ / Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ /